«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
14 ապրիլի 2005 թ.
Պետական գրանցման թիվ 10205160

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

31 մարտի 2005 թ. N 39-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի «Լիազոր մարմին ճանաչելու մասին» թիվ 56-Ն որոշմամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Կուսակցությունների կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու կարգը (հավելված 1):
2. Հաստատել ֆինանսական հաշվետվությունների ձևերը (հավելված 2):

Դ. Հարությունյան

Հավելված N 1

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
2005 թվականի մարտի 31-ի
թիվ 39-Ն հրամանով

Կ Ա Ր Գ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Կուսակցությունները՝ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:
2. Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ:
3. Կուսակցության ֆինանսական հաշվետվությունը պետք է պարունակի տվյալներ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության՝

ա) ստացած և ծախսած միջոցների մասին.

բ) կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի մասին.

գ) կուսակցությանը պատկանող գույքի մասին՝ նշելով դրա արժեքը:

4. Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են սահմանված ձևերի հիման վրա: Ֆինանսական հաշվետվության սկզբում նշվում է այն ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը: Ֆինանսական հաշվետվության բոլոր էջերը ստորագրվում է կուսակցության իրավասու պաշտոնատար անձի կողմից և կնքվում է կուսակցության կնիքով:

5. Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման և անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին, նույն ձևերի հիման վրա: Այդ հաշվետվությունները պետք է պարունակեն նշում, այն մասին, թե որ ընտրության նախապատրաստման և անցկացման համար են կատարվել ծախսերը:

Հավելված N 2

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
2005 թվականի մարտի 31-ի
թիվ 39-Ն հրամանով

էջ 1, 2, 3, 4, 5

----------Կուսակցության տարեկան ֆինանսական հաշվետվությունը 200— թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար